և հաստատուն 'ի վերայ հաւատոյ արամբ և սի-
րով կապակցեալ ընդ սեպհական աշխարհն իւ-
րեանց՝ բարի թուեցաւ ինձ շարադրել գրքուկս
այս իբրև նշաւակ այն որ 'ի ժամանակի կենաց
իմոց աչօք իմովք տեսի, և վարք իշխանութեան
ազատաց, որում ուղղէ կառավարութիւնս իւ-
րեանց երջանկութեամբ 'ի ներքոյ արեգական, ոչ
համարձակութեամբ իբր թէ կամք իմ է, զի աշ-
խարհ բանից իմոց ընդունեսցեն, քաւ մի լիցի,
այլ միմիայն զիրքս այս նշոյլ տեսողաց և զգու-
շացուցանող երկայնամտաց լիցի, և միմիայն
նշաւակ մի փոքրիկ, զի միտս իւր բերցէ ազգն
իմ դուռն ազատութեան և ճարն անճարի, հնարն
անհնարի և այլն՝ նայելով 'ի սմայ բարեպէս
գտանի ճանապարհ հեշտալի վասն ազատութեան,
որում ոչ երկբայիմ եթէ մի գացի 'ի մէջ յազ-
գին իմոյ ճարտարապետ, իմաստուն եթէ ձկտիցէ
միտս իւր 'ի ռահն ազատութեան, զի կարող մի
լինիցի հազարապատիկ քան զայս գերագոյն շա-
րադրել և այլն։

Միմիայն խնդիր իմ է ընթերցողէ սմայ, զի
գտանելն գրքոյս այս՝ նախ ընթերցի երիս ան-
գամ սկզբէն մինչև ցվերջ, երկրորդ՝ եթէ պա-
տահեսցի որ ընթերցողն իցէ ծնեալ և սնեալ ընդ
այնմ կողմ աշխարհի, որում պահպանեցեալ լինի
'ի ազգէ բարբարոսաց, աղաչեմ նմայ, զի որոնեսցէ
և գտցէ ոմն բնակող և աշխարհատես 'ի մէջ կա-